**ՏԵՂԵԿԱՆՔ**

**(«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածներում առաջարկվող փոփոխությունների և լրացումների վերաբերյալ)**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի
կողմից
27 դեկտեմբերի 1997 թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

### Հոդված 11. Նոտարական գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը

Նոտարական գրասենյակները նոտարական գործողությունների համար պետական տուրքը գանձում են հետևյալ դրույքաչափերով`

| | | |
|---|---|---|
| 1. | անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի օտարման (բացառությամբ` նվիրատվության) պայմանագրերը վավերացնելու համար` | |
| ա) | գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի կամ տնամերձերի կամ պետական կամ համայնքային սեփականության հողամասերի | բազային տուրքիհիսուն տոկոսի չափով |
| բ) | այլ անշարժ գույքի | բազային տուրքիհնգապատիկի չափով |
| 2. | անշարժ գույքի օգտագործման (վարձակալության, անհատույց օգտագործման, ռենտայի և այլն) պայմանագրերը վավերացնելու համար` | |
| ա) | գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի կամ տնամերձ հողամասերի, պետական կամ համայնքային սեփականություն համարվող հողամասերի, ինչպես նաև հանրակացարանների համար | բազային տուրքիհիսուն տոկոսի չափով |

| | | |
|---|---|---|
| բ) | բնակարանների համար | բազային տուրքիչափով |
| գ) | այլ անշարժ գույքի համար | բազային տուրքիհնգապատիկի չափով |
| 3. | ավտոտրանսպորտային միջոցների օտարման (բացի նվիրատվությունից) պայմանագրերը վավերացնելու համար՝ | |
| ա) | առաջին հերթի ժառանգներին | բազային տուրքիկրկնապատիկի չափով |
| բ) | երկրորդ և երրորդ հերթի ժառանգներին | բազային տուրքիեռապատիկի չափով |
| գ) | այլ անձանց | բազային տուրքիհնգապատիկի չափով |
| 4. | գրավի (բացառությամբ անշարժ գույքի հիփոթեքի կամ շարժական գույքի կոշտ գրավի) պայմանագրերի վավերացման համար | բազային տուրքիկրկնապատիկի չափով |
| 5. | անշարժ գույքի հիփոթեքի կամ շարժական գույքի կոշտ գրավի պայմանագրերի վավերացման (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի, տնամերձերի և այգեգործական հողամասերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության գույքի) համար | բազային տուրքիչափով |
| 6. | գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի, տնամերձերի և այգեգործական հողամասերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության գույքի պայմանագրերի վավերացման համար | բազային տուրքիհիսուն տոկոսի չափով |
| 7. | գյուղատնտեսական նշանակության հողերի, տնամերձերի, այգեգործական հողերի միավորման, բաժանման պայմանագրերի վավերացման համար | բազային տուրքիհիսուն տոկոսի չափով |
| 8. | այլ պայմանագրերի վավերացման համար | բազային տուրքիկրկնապատիկի չափով |
| 8.1. | էլեկտրոնային պայմանագրերի էլեկտրոնային եղանակով վավերացման համար | բազային տուրքի հիսուն տոկոսի չափով |
| 9. | կտակների վավերացման համար | բազային տուրքիկրկնապատիկի չափով |
| 10. | ժառանգության իրավունքի վկայագրեր տալու և նվիրատվության պայմանագրերի վավերացման համար՝ | |
| ա) | առաջին հերթի ժառանգներին | բազային տուրքիկրկնապատիկի |

**Deleted:** ¶
¶

| | | |
|---|---|---|
| | | չափով |
| բ) | երկրորդ և երրորդ հերթի ժառանգներին | բազային տուրքիեռապատիկի չափով |
| գ) | այլ անձանց | բազային տուրքիհնգապատիկի չափով |
| 10.1. | կտակակատարի լիազորությունների հավաստման վկայագրեր տալու համար | բազային տուրքի չափով |
| 11. | անշարժ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի լիազորագրեր վավերացնելու համար | բազային տուրքիեռապատիկի չափով |
| 12. | շարժական գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման (բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների) լիազորագրեր վավերացնելու համար | բազային տուրքիկրկնապատիկի չափով |
| 13. | գույքային իրավունքների կառավարման լիազորագրերի վավերացման համար | բազային տուրքիչափով |
| 14. | ավտոտրանսպորտային միջոցները տնօրինելու իրավունքի լիազորագրերը վավերացնելու համար` | |
| ա) | առաջին հերթի ժառանգներին | բազային տուրքիչափով |
| բ) | երկրորդ և երրորդ հերթի ժառանգներին | բազային տուրքիհնգապատիկի չափով |
| գ) | այլ անձանց | բազային տուրքիքսանապատիկի չափով |
| 15. | ավտոտրանսպորտային միջոցները տնօրինելու իրավունքի վերալիազորման իրավունքով լիազորագրերի վավերացման համար` | |
| ա) | առաջին հերթի ժառանգներին | բազային տուրքիչափով |
| բ) | այլ անձանց | բազային տուրքիերեսնապատիկի չափով |
| 16. | այլ լիազորագրերի վավերացման համար | բազային տուրքիհիսուն տոկոսի չափով |
| 17. | ժառանգական գույքի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման համար | բազային տուրքիկրկնապատիկի չափով |
| 18. | փաստաթղթերի թարգմանության յուրաքանչյուր էջի իսկության վավերացման համար | բազային տուրքիհիսուն տոկոսի չափով |
| 19. | փաստաթղթերի պատճենների և դրանցից քաղվածքների յուրաքանչյուր էջի իսկության վավերացման համար | բազային տուրքիերեսուն տոկոսի չափով |
| 20. | փաստաթղթերի ստորագրությունների, այդ թվում` | բազային տուրքիհիսուն տոկոսի |

| | | |
|---|---|---|
| | թարգմանչի ստորագրության յուրաքանչյուր փաստաթղթի իսկության վավերացման համար | չափով |
| 21. | առանց դատարան դիմելու` գրավ դրված գույքի հաշվին գրավառուի պահանջները բավարարելու վերաբերյալ գրավառուի և գրավատուի միջև կնքված համաձայնության վավերացման համար | բազային տուրքիհնգապատիկի չափով |
| 21.1. | կատարողական մակագրության թերթ տալու համար | բազային տուրքիհնգապատիկի չափով |
| 21.2. | իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման համար` | |
| ա) | անձանց ազգակցական հարաբերությունները հաստատելու համար | բազային տուրքիկրկնապատիկի չափով |
| բ) | անձի` ուրիշի խնամքի տակ գտնվելու փաստը հաստատելու համար | բազային տուրքիկրկնապատիկի չափով |
| գ) | ծննդյան, որդեգրման (դստերագրման), ամուսնության, ամուսնալուծության և մահվան գրանցումը հաստատելու համար | բազային տուրքիկրկնապատիկի չափով |
| դ) | ժառանգությունն ընդունելու և ժառանգության բացման վայրի փաստի հաստատման համար | բազային տուրքիկրկնապատիկի չափով |
| ե) | իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելությունը հաստատելու համար | բազային տուրքիկրկնապատիկի չափով |
| զ) | սեփականության իրավունքով գույքի տիրապետումը հաստատելու համար | բազային տուրքիկրկնապատիկի չափով |
| 21.3. | գույքի նկատմամբ իրավունքների գրանցում իրականացնող մարմիններին գույքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ նախնական նշում կատարելու ծանուցման համար | բազային տուրքիչափով |
| 22. | նոտարական այլ գործողությունների համար | բազային տուրքիկրկնապատիկի չափով: |

*(11-րդ հոդվածը լրաց. 19.06.98 ՀՕ-227, խմբ., լրաց., փոփ. 28.12.98 ՀՕ-277, 12.10.99 ՀՕ-4, խմբ., փոփ. 06.11.00 ՀՕ-111, փոփ. 13.12.00 ՀՕ-123, լրաց. 15.12.00 ՀՕ-136, խմբ. 12.06.02 ՀՕ-375-Ն, փոփ. 04.10.05 ՀՕ-198-Ն, լրաց. 19.10.16 ՀՕ-187-Ն)*